ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№-/25148-2025

«06» 11 2025թ

ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՁ (ՀՎՀՀ 35262285)
(ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան,
Չեխովի փ., շ16, բն.10, հեռ. 055114101)
էլ. փոստ՝ **pchelper2018@gmail.com**

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
(ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-25/48-1 ծածկագրով պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և Գոռ Նիկողոսյան ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 14.07.2025 թվականին կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-25/48-1 պետական գնման պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում Գոռ Նիկողոսյան ԱՁ-ն մինչև 3-րդ եռամսյակ պետք է մատուցեր էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ, այդ թվում՝ Adobe Creative Cloud All Apps արտոնագրի երկարացում, սակայն նշված ժամկետում այդ ծառայությունը չի մատուցվել:

Պայմանագրի 2.1.3 կետի բ/ ենթակետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրն, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 7.11-րդ կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գոռ Նիկողոսյան ԱՁ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը

մասնակի միակողմանի լուծում է 14.07.2025 թվականին կնքված N ՀՀԷՆ-ԷԱՃԾՁԲ-25/48-1 **պետական գնման պայմանագիրը**, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 7.11-րդ կետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 50 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 75 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Պայմանագրի չկատարման արդյունքում առաջացած 2412 ՀՀ դրամ տուգանքը և 5788,8 ՀՀ դրամ տույժը անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն 900011018695 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ Ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հարգանքով՝

Ստորագրող
ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ
1205870326

2025-11-06 10:51:29 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Կատարող՝
Խորհրդական, Դավիթ Մհերյան
011597223